«ԳՈՐԻՍԻ ՊԵՏԱԿԱՆ ՔՈԼԵՋ» ՊՈԱԿ

# ԿԱՆՈՆԱԿԱՐԳ

## «ԳՈՐԻՍԻ ՊԵՏԱԿԱՆ ՔՈԼԵՋ» ՊՈԱԿ-ՈՒՄ ՍՏԱՑԱԾ ԿՐԹՈՒԹՅՈՒՆԻՑ ԲԱՎԱՐԱՐՎԱԾՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՇՐՋԱՆԱՎԱՐՏՆԵՐԻ ՀԱՐՑՄԱՆ

# «ԳՈՐԻՍԻ ՊԵՏԱԿԱՆ ՔՈԼԵՋ» ՊՈԱԿ-Ի

## Կ Ա Ռ Ա Վ Ա Ր Մ Ա Ն   Խ Ո Ր Հ Ո Ւ Ր Դ

---

### ՈՐՈՇՈՒՄ N 12

21. 11 2013թ.   ք. Գորիս

«ԳՈՐԻՍԻ ՊԵՏԱԿԱՆ ՔՈԼԵՋ» ՊՈԱԿ-Ի ՍՏԱՑԱԾ ԿՐԹՈՒԹՅՈՒՆԻՑ ԲԱՎԱՐԱՐՎԱԾՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՇՐՋԱՆԱՎԱՐՏՆԵՐԻ ՀԱՐՑՄԱՆ ԿԱՆՈՆԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Գորիսի պետական քոլեջ» ՊՈԱԿ-ի կանոնադրությամբ.

### Ո Ր Ո Շ Ո Ւ Մ   Ե Մ

1. Հաստատել «Գորիսի պետական քոլեջ» ՊՈԱԿ-ի ստացած կրթությունից բավարարվածության վերաբերյալ շրջանավարտների հարցման կանոնակարգը:

Նախագահ՝ ԱՐԱՐԱՏ ԼԱԼԱԲԵԿՅԱՆ

(ստորագրություն)

Քարտուղար՝ ԱՆԺԵԼԱ ԱՌԱՔԵԼՅԱՆ

(ստորագրություն)

## «ԳՈՐԻՍԻ ՊԵՏԱԿԱՆ ՔՈԼԵՋ» ՊՈԱԿ-Ի

ՏՆՕՐԵՆ

---

ՀՐԱՄԱՆ N 40

«__28_»_____03_____2019թ.

ք. Գորիս

## «ԳՈՐԻՍԻ ՊԵՏԱԿԱՆ ՔՈԼԵՋ» ՊՈԱԿ-Ի

### ՍՏԱՑԱԾ ԿՐԹՈՒԹՅՈՒՆԻՑ ԲԱՎԱՐԱՐՎԱԾՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՇՐՋԱՆԱՎԱՐՏՆԵՐԻ ՀԱՐՑՄԱՆ ԿԱՆՈՆԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

1. Հաստատել «Գորիս պետական քոլեջ» ՊՈԱԿ-ի *ստացած կրթությունից բավարարվածության վերաբերյալ շրջանավարտների հարցման կանոնակարգը*։
2. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում ընդունման օրվանից։

ՏՆՕՐԵՆ՝ ԿԱՐԵՆ ԼԱԶԱՐՅԱՆ

(ստորագրություն)

Հաստատված է

«Գորիսի պետական քոլեջ» ՊՈԱԿ-ի տնօրենի

2019 թ. «Նոյեմբեր» «28» N 40 հրամանով

## 1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.1. Գորիսի պետական քոլեջում ստացած կրթությունից բավարարվածության վերաբերյալ շրջանավարտների հարցման (այսուհետ՝ հարցման) կանոնակարգը սահմանում է «Գորիսի պետական քոլեջ» ՊՈԱԿ-ի (այսուհետև՝ քոլեջ) շրջանավարտների կողմից քոլեջում ստացած կրթության արդյունավետության և կրթական ծառայությունների որակի գնահատման կարգը:
1.2. Հարցումն անցկացվում է «Կրթության մասին» ՀՀ օրենքի և քոլեջի կանոնադրության պահանջների համաձայն և համարվում է քոլեջի որակի ապահովման ներքին համակարգի կարևորագույն բաղադրիչը:

## 2. ՀԱՐՑՄԱՆ ԱՆՑԿԱՑՈՒՄԸ

2.1. Հարցումն իրականացվում է քոլեջի շրջանավարտների շրջանում:
2.2. Հարցումն իրականացվում է յուրաքանչյուր ուսումնական տարվա վերջում՝ մայիս-հունիս ամիսներին:
2.3. Հարցումն անցկացվում է քոլեջի ուսումնական մասի կողմից:
2.4. Հարցումն անցկացվում է սույն կանոնակարգին կից ներկայացված գնահատման հարցաշարի հարցերից կազմված հարցաթերթով (տե՛ս հավելված 1), որում շրջանավարտը 1-3 միավորանոց գնահատման սանդղակով պատասխանում է առաջադրված հարցերին:
2.5. Հարցումն անանուն է և անց է կացվում թղթային եղանակով:

## 3. ՀԱՐՑՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄՇԱԿՈՒՄԸ ԵՎ ՊԱՀՊԱՆՈՒՄԸ

3.1 Հարցման արդյունքները մշակվում են քոլեջի գործավարների կողմից՝ տրամադրվում ուսումնական մասին և որակի ապահովման բաժնին:
3.2 Հարցման արդյունքները ներկայացվում են յուրաքանչյուր հարցադրման պատասխանի համար հաշվարկված գնահատականների միջին թվաբանականով[1], միջին քառակուսային շեղումով[2] և ստացած յուրաքանչյուր գնահատականի քանակով:
3.3 Հարցաթերթերն ունեն կարծիքների և առաջարկությունների բաժիններ, որոնց արդյունքները մշակվում և ներկայացվում են ուսումնառության բարելավմանը միտված ընդհանրացված առաջարկությունների տեսքով:
3.4 Հարցման արդյունքների մշակումն ու վերլուծությունը կատարվում է մեկամսյա ժամկետում:
3.5 Հարցաթերթում գնահատականների ուղղումները չեն հաշվարկվում:

## 4. ՀԱՐՑՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄԸ

4.1. Հարցման արդյունքները և վերլուծությունները ուսումնական մասը քննարկում է (ներկայացնում է) որակի կառավարման հանձնաժողովի, որակի բաժնի հետ:
4.2. Ուսումնական մասը հարցման արդյունքների վերլուծությունների հիման վրա ամբիոնների վարիչների, մեթոդմիավորումների նախագահների հետ քննարկում և մշակում է քոլեջի գործունեության տարբեր ասպեկտների որակի բարելավմանն ուղղված միջոցառումների պլան:

---

[1] [illegible]

[2] [illegible]

4.3. Ուսումնական մասի ղեկավարները մեկամյա ժամկետում առաջարկությունների փաթեթի հիման վրա մշակում են քոլեջում բարելավման գործողություններ ու միջոցառումներ և ներկայացնում Մանկավարժական խորհրդի հաստատմանը, որտեղ նշվում են դրանց իրականացման ժամկետները և պատասխանատուները:

4.4. Հարցման արդյունքներն օգտագործվում են միայն ամփոփ տեսքով, իսկ անհատական տվյալների գաղտնիությունը երաշխավորվում է:

## 5. ԿԱՐԳԻ ՀԱՍՏԱՏՈՒՄԸ ԵՎ ՆՐԱՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄԸ

5.1 Սույն կանոնակարգը հաստատում է քոլեջի Կառավարման խորհուրդը:

5.2 Կանոնակարգում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել քոլեջի.

5.2.1. տնօրենի,

5.2.2. մանկավարժական խորհրդի անդամների

5.2.3. Որակի կառավարման հանձնաժողովի առաջարկությամբ՝ մանկավարժական խորհրդի որոշմամբ:

Հավելված 1

## ԳՈՐԻՍԻ ՊԵՏԱԿԱՆ ՔՈԼԵՋԻ ՇՐՋԱՆԱՎԱՐՏՆԵՐԻ ՍՏԱՑԱԾ ԿՐԹՈՒԹՅՈՒՆԻՑ ԲԱՎԱՐԱՐՎԱԾՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՐՑԱՇԱՐ

Հարգելի՛ շրջանավարտներ, Գորիսի պետական քոլեջը կարևորում է ձեր կարծիքը և վստահեցնում, որ ձեր անկեղծ ու օբյեկտիվ պատասխանները կօգնեն բարելավելու քոլեջի գործունեությունը:

Հարցումն անանուն է, և ստացված տվյալները կօգտագործվեն միայն ընդհանրացված տեսքով:

Խնդրում ենք լրացնել հարցաթերթը և.

- գնահատել 0-3 բալային սանդղակով, որտեղ՝ 0-ն նշանակում է, որ չի իրականացվում, 1-3 բալային սանդղակում 1-ը նվազագույն միավորն է, 3-ն առավելագույնը:

| | | |
|---|---|---|
| 1. *Քոլեջի և մասնագիտության ընտրությանը նպաստող գործոններ* | | |
| Կրթական ո՞ր աստիճանն եք ավարտում | | |
| միջին մասնագիտական | | |
| նախնական մասնագիտական (արհեստագործական) | | |
| 1.1. *Պատրաստվո՞ւմ եք շարունակել Ձեր ուսումը Գորիսի պետական քոլեջում* | ԱՅՈ ☐ | ՈՉ ☐ |
| 1.2. *Պատրաստվո՞ւմ եք շարունակել Ձեր ուսումը ԲՈւՀ-ում* | ԱՅՈ ☐ | ՈՉ ☐ |
| 1.3. *Հայտնի՞ է արդյոք, թե որտեղ եք աշխատելու* | ԱՅՈ ☐ | ՈՉ ☐ |
| 1.4. *Եթե աշխատում եք, խնդրում ենք նշել, թե ում օգնությամբ եք գտել Ձեր աշխատանքը* | | |
| | | |

| | |
|---|---|
| 2. *Ուսանողների բավարարվածությունը կրթական ծրագրերի բովանդակությունից, ուսուցման մեթոդաբանությունից և ուսումնական գործընթացի կազմակերպումից* | *ՄԻԱՎՈՐ* |
| 2.1. *Դասընթացների նպատակը և խնդիրները ուսանողին ներկայացվում են հստակ* | |
| 2.2. *Ինչպե՞ս եք գնահատում դասընթացների մատուցման ձևերը* | |
| 2.3. *Ինչպե՞ս եք գնահատում մասնագիտական գործունեության մեջ դասընթացների օգտակարությունը* | |
| 2.4. *Քոլեջում ուսումնառությունը նպաստում է մասնագիտական կարողությունների ձեռքբերմանը* | |
| 2.5. *Քոլեջում ուսումնառությունը տալիս է տեսական գիտելիքներ* | |
| 2.6. *Քոլեջում ուսումնառությունը տալիս է գործնական հմտություններ* | |
| 2.7. *Քոլեջում ուսումնառությունն ապահովում է հաղորդակցական և կազմակերպչական հմտություններ* | |
| 2.8. *Քոլեջում ուսումնառությունն ապահովում է օտար լեզուների իմացությունը* | |
| 2.9. *Ինչպե՞ս եք գնահատում առաջարկվող կրթական ծրագրերի ուսումնամեթոդական ապահովվածությունը* | |
| 2.10. *Ինչպե՞ս եք գնահատում պրակտիկաների օգտակարությունը* | |
| 2.11. *Մասնագետների պատրաստման ուղղվածությունը և մակարդակը համապատասխանում է աշխատաշուկայի պահանջներին* | |
| 2.12. *Ուսանողների գիտելիքներն օբյեկտիվ են գնահատվում* | |
| 2.13. *Ինչպե՞ս եք գնահատում ավարտական ատեստավորման օբյեկտիվությունը* | |
| *Ուսանողների բավարարվածությունը քոլեջի ուսումնառության ռեսուրսներից և* | *ՄԻԱՎՈՐ* |

| | | |
|---|---|---|
| 3.1 Լսարանների վիճակը և կահավորանքը կարելի է գնահատել | | |
| 3.2 Ուսումնական լաբորատորիաների վիճակը և կահավորանքը կարելի է գնահատել | | |
| 3.3 Քոլեջի համակարգչային սրահների վիճակը և կահավորանքը կարելի է գնահատել | | |
| 3.4 Քոլեջի ինտերնետի մատչելիությունը կարելի է գնահատել | | |
| 3.5 Հաճա՞խ եք օգտվում քոլեջի գրադարանից/ընթերցասրահից | ԱՅՈ ☐ | ՈՉ ☐ |
| 3.6 Գրադարանը տրամադրում է ժամանակակից մասնագիտական գրականություն | ԱՅՈ ☐ | ՈՉ ☐ |
| 3.7 Գրադարանի ընթերցասրահի վիճակը և կահավորանքը կարելի է գնահատել | | |
| 3.8 Գրադարանի/ընթերցասրահի սպասարկումը կարելի է գնահատել | | |
| 4. Ուսանողների բավարարվածությունը քոլեջի միջավայրից | ՄԻԱՎՈՐ | |
| 4.1 Գո՞հ եք արդյոք | | |
| 4.1.1. Քոլեջի ղեկավարությունից | | |
| 4.1.2. Ուսումնական մասից | | |
| 4.1.3. Դաստիարակչական կազմից | | |
| 4.1.4. Վարչական աշխատողներից | | |
| 4.2 Դրական կամ բարձր գնահատական ստանալու նպատակով դասախոսի համար գոնե մեկ անգամ կատարե՞լ եք ծառայություն, դրամական կամ այլ նվիրատվություն | ԱՅՈ ☐ | ՈՉ ☐ |
| 4.3 Արդյոք հստակ և թափանցի՞կ են ուսանողների դիմումների և բողոքների արտահայտման ընթացակարգերը և մեխանիզմները | ԱՅՈ ☐ | ՈՉ ☐ |
| 5. Ուսանողների բավարարվածությունը քոլեջի կրթական ծրագրերի վերաբերյալ հանրությանը տրամադրվող տեղեկատվության արժանահավատությունից | ՄԻԱՎՈՐ | |
| 5.1 Քոլեջի կողմից հանրությանը տրամադրվող տեղեկատվությունը համապատասխանո՞ւմ է իրականությանը | | |
| 5.1.1. Աշխատաշուկայում մասնագիտական բարձր պահանջարկվածության մասին | | |
| 5.1.2. Գործնական մասնագիտական կարողությունների և հմտությունների ձեռքբերման հնարավորության մասին | | |
| 5.1.3. Ուսումնական ռեսուրսների և օժանդակ ծառայությունների մասին | | |
| 6. Ընդհանուր առմամբ ինչպե՞ս եք գնահատում քոլեջում Ձեր ստացած կրթությունը | | |
| 7. Խորհուրդ կտա՞ք Ձեր մտերիմներին և ընկերներին ընդունվել Գորիսի պետական քոլեջ | ԱՅՈ ☐ | ՈՉ ☐ |
| 8. Ձեր կարծիքները և առաջարկները. | | |